



Գործնական աշխատանք

ԿՈՂՄՆԱՅՈՒՅՅԻ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇԵԼ ՕԲՅԵԿՏԻ ՏԵՂԱԳԻՐՔԸ

Աշխատանքի թեման: Կազմել դպրոցի բակի սխեմատիկ պատկերը:

Անհրաժեշտ նյութեր: Աշակերտական վանդակավոր տետրի զույգ էջ, 20–25 սմ երկարությամբ եռանկյունի քանոն, կողմնացույց (կարելի է օգտագործել նաև բջջային հեռախոսում տեղակայված կողմնացույցը), դյուրակիր սեղան, լավ սրված սև մատիտ, գունավոր մատիտներ և ռետին:

Աշխատանքի ընթացքը:

Աշակերտական տետրի զույգ թերթը և կողմնացույցը ամրացվում ենք 3–4 մմ հաստությամբ ստվարաթղթի վրա՝ կազմելով պլանշետ:

– Դպրոցի բակի կենտրոնում ընտրում ենք դիտակետ:

– Կանգնելով այդ կետում, աչքաչափով որոշում ենք այդ կետից դպրոցի տարածքի եզրակետերի հեռավորությունը և ելնելով տետրի թղթի չափերից ընտրում համապատասխան մասշտաբ, օրինակ՝ 2 վանդակը 10 քայլ (մոտ 5 մետր): Այս տվյալը գծային մասշտաբի ձևով նշում ենք պլանշետի աջ կողմի ստորին մասում:

– Պլանշետը սեղանի վրա պտտում ենք մինչև դրա վրա ամրացված կողմնացույցի սլաքի կապույտ կողմը համընկնի հյուսիս (С կամ N) մակագրի հետ: Դրանից հետո պլանշետը անշարժացնում ենք սեղանի վրա:

– Հորիզոնի հյուսիսային ուղղությունը սլաքի ձևով նշում ենք պլանշետի ձախ եզրն: Այնուհետև պլանշետի վրա այդ սլաքին զուգահեռ, իրարից հավասար հեռավորության վրա (10 վանդակ) անց ենք կացնում մի քանի գիծ:

- Առաջինը ապագա հատակագծի վրա տեղադրվում է պլան-շետի գտնվելիք կետը, այնուհետև սկսում ենք տարածքի օբյեկտների տեղաբաշխման պատկերումը հատակագծի վրա:

- Հատակագծի վրա օբյեկտների տեղադրումը ցանկալի է իրականացնել ձախից դեպի աջ:

- Նախանշվում և համարակալվում են դիտարկվող օբյեկտների առավել բնութագրական կետերը (անկյունները, օբյեկտի սկիզբը, մոտավոր կենտրոնը, վերջը), որոնք ուղիղ գծերով միացվում են դիտակետին:

- Աշակերտները հերթով, քայլքով չափում են այդ կետերի և դիտակետի միջև եղած հեռավորությունը և տվյալները ըստ մասշտաբի տեղադրվում է պլանշետի վրա:

- Այս ձևով չափվում և տեղադրվում են բոլոր նախանշված կետերը:

- Միացնելով համարակալված կետերը կազմում ենք տեղանքի մոտավոր հատակագիծը:

- Հեռացնում ենք չափման գծերը և օբյեկտներին տալիս պամանական գունավորում:

Այսպիսով կազմվում է տեղանքի հատակագիծը ուր հստակ ներկայացված են որոշակի տարածքում օբյեկտների տեղադիրքը հորիզոնի կողմերի և միմյանց նկատմամբ, ինչպես նաև դրանց միջև եղած հեռավորությունը: Հատակագծի կառուցման այս եղանակը կոչվում է «Բևեռային հանույթ»:

Փոքր տարածքների դեպքում քայլքով չափման փոխարեն կարելի է օգտագործել 10-20 մ երկարության մետաղյա չափաժապավեն: Այս դեպքում հատակագծի ճշգրտությունը ավելի բարձր կլինի:

Հատակագծի կառուցման գծապատկերները ներկայացված են աշխատանքային տետրում: